



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ  
ՏՆՕՐԵՆ

« 26 » 07 2021թ.

№ 08/ԼԱ/ - 552

2021թ. հուլիսի 19-25-ը դիտված օդերևութաբանական  
պայմանները ՀՀ-ում

Հուլիսի 19-ին, 22-ին, 24-25-ը՝ առանձին շրջաններում, 23-ին՝ շրջանների զգալի մաստում դիտվել է անձրև և ամպրոպ, 20-21-ը դիտվել է առավելապես առանց տեղումների եղանակ:

Տեղումների առավելագույն գումարային քանակը կազմել է. Ծաղկահովիտում՝ 27մմ, Գավառում՝ 19,3մմ, Ապարանում՝ 19մմ, Ճամբարակում 12,7մմ, Սևանում և Սեմյոնովկայում՝ 11,7մմ, Դիլիջանում՝ 11,4մմ, Ամասիայում, Շորժայում և Ամբերդում՝ 11մմ, մնացած շրջաններում մինչև 9մմ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը հուլիսի 19-ին, 22-ին նորմայից բարձր է եղել 2-4, 20-ին՝ 4-6, 21-ին՝ 5-7 աստիճանով, 23-25-ին եղել է նորմայի սահմաններում՝ դրական և բացասական շեղումներով:

Օդի ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է. Արմավիրում՝ +40°C, Արարատում՝ +40...+41°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +38...+40°C, նախալեռնային շրջաններում՝ +32...+33°C, Վայոց Ձորի նախալեռնային շրջաններում՝ +41°C, լեռնային շրջաններում՝ +33°C, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ +35...+40°C, լեռնային շրջաններում՝ +30...+32°C, Տավուշում՝ +35...+38°C, Շիրակում՝ +32...+36°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +31...+32°C, նախալեռնային շրջաններում՝ +38°C, Լոռիում՝ +30...+35°C, Գեղարքունիքում՝ +27...+32°C, Երևան քաղաքում՝ +40...+41°C:

Օդի ամենացածր ջերմաստիճանը դիտվել է. Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +10...+12°C, նախալեռնային շրջաններում՝ +18...+19°C, Շիրակում՝ +12...+13°C (Աշոցքում +7°C), Լոռիում՝ +11...+16°C, Վայոց Ձորում՝ լեռնային շրջաններում՝ +12°C, նախալեռնային շրջաններում՝ +22°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +12...+14°C, նախալեռնային շրջաններում՝ +18°C, Գեղարքունիքում՝ +12...+14°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +19...+23°C, նախալեռնային շրջաններում՝ +14...+17°C, Արմավիրում՝ +18°C, Տավուշում՝ +19...+20°C (Դիլիջանում +13°C), Արարատում՝ +20...+22°C, Երևան քաղաքում՝ +19...+21°C:

Հուլիսի 22-ին Արմավիրում դիտվել է ուժեղ քամի 20մ/վրկ, պողոթյունների ժամանակ մինչև 30մ/վրկ արագությամբ, 19-ին՝ Իջևանում՝ 8մ/վրկ, պողոթյունների ժամանակ մինչև 25մ/վրկ արագությամբ, շաբաթվա ընթացքում առանձին շրջաններում՝ 8-20մ/վրկ, պողոթյունների ժամանակ՝ մինչև 15-20մ/վրկ արագությամբ:

Շաբաթվա ընթացքում շարունակվել է գյուղատնտեսական մշակաբույսերի աճն ու զարգացումը, դաշտային աշխատանքները և բերքահավաքը: Դիտված տեղումները բարձրացրել են հողի արդյունավետ խոնավության պաշարները:

Լեռնային շրջաններում շարունակվել է կաղամբի գլխի ձևավորումը, տեխնիկական հասունացումը, ինչպես նաև սկսվել է պտղատուների հասունացումը, բանջարանոցային մշակաբույսերը և կարտոֆիլը գտնվել են կողային ընձյուղների առաջացման փուլում:

Նախալեռնային շրջաններում աշնանացան ցորենի և պտուղների հասունացումը շարունակվել է, կատարվել է բերքահավաք:

Հովտային շրջանների պտղատու այգիներում, խաղողի և ջերմասեր մշակաբույսերի դաշտերում կատարվել է հերթական վեգետացիոն և սնուցող ոռոգում:

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում ջրի ելքերի բնական էական փոփոխություններ չեն դիտվել:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում իջել է 1 սմ-ով (18.07-25.07.2021թթ. տարբերությունը) և կազմել՝ 1900.74մ (25.07.21թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից ցածր է 3 սմ-ով:

Տնօրենի պարտականությունները կատարող



Վ.Գրիգորյան